Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2858

ՀԵՏԱՔՕՏՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԱԿԱՆ

ԳՐԻՊԱԿԱՑ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԻՆՏԻՍԵԱՆ

1864

529
Ե-79

2010

Z-52
529
Ե-79

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԱԿԱՆ

ԳՐԻՊԱԿԱՑ

Ի ՏԷՐ ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ

ԽԱՍԳԻՒՂԻ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

1864

Եղեցին լուսաւորք 'ի հաստատութեան երկնից 'ի լուսաւորութիւն 'ի վերայ երկրի, և մեկնել 'ի մէջ տուընջեան և 'ի մէջ գիշերոյ, և եղեցին 'ի նշանս, և 'ի ժամանակս, և յաւուրս, և 'ի տարիս։

Ծննդոց · Ա · 14։

Օ՜ի նա եւ ինձ զանվրէպ գիտութիւն ղեղեալոց, գիտել զհաստատութիւն աշխարհի, և զազդեցութիւն բնութեանց զսկիզբն և զկատարած, և զմէջ ժամանակաց, զշրջանաց փոփոխմունս, և զջրջիլ ժամանակաց, զտարբերաց բոլորմունս, և զասեղաց գիրս։

Իմաստութեան · Է · 17։

L 002

78186 ասի

1270-87

ԲԱՌԱՓԱՐԱՆ

Մեր ազգայնոց միլիոնաւոր անձանց անծանօթ մնացած ազգային տոմարական հաշիւներուն յայտնի վրիպակները շատ ժամանակէ ի վեր կը ցանկայի Ազգիս լուրթեան իմաց տալ, և յայտնի սխալները լաւ ինքեան ծանուցեալ փաստերով ի լուր ամենեցուն ապացուցանել. յուսալով թէ Ազգիս բարեկարգութեան և բարի համբաւոյն բաղձանք ունեցող մեծագոյն մասը կը արեհաձի այս վրիպակներուն ուղղութեանը յարմար միջոցները խորհելու, և ժամ յառաջ արդեամբ պահելու, որով մեր եկեղեցական տօնները՝ մանաւանդ սուրբ Զատկի հռչակաւոր տօնը սուրբ գրոց ցրցուցած ճիշդ օրը կատարի, և հետևաբար առաջի լուսաւորեալ ազգաց մեր Ազգն ալ յառաջադիմութեան և լուսաւորութեան մեծ համարում և յարգ ստանայ։

Վասն զի այս վրիպակները մինչև ցարդ մեր Ազգը չճանաչելուն, և կամ ուղղելու քանք չքնելուն համար, յառաջադէմ ազգաց

առաջև շատ յետադէմ համարուած է։

Ուստի այս փոքրիկ տետրակիս միջոցաւ կամեցայ տօմարական հաշիւներու վրայօք համառօտաբար մեկ քանի կարևոր տեղեկութիւններ տալ, որպէս զի ընթերցողք վերոպակներուն ինչ ըլլալը, և որ աղբիւրներէ յառաջ գալը իմանալով, կարողանան սիրալը ճանաչել, ուղիղը որոշել, և ուղղութիւնը խնդրել։

Բաւական եմ, որ այս բարենպատակ աշխատութիւնները, և մեր դուշնաքեայ աշխատութիւնը Ազգայնոց և Ազգային բարեջան Վարչութեան պատկառելի կրկին ժողովոց հաճելի ըլլալով, կիսուեան՝ այս վերոպակները ուղղելու եղանակը խորհելու, 'ի պարծանս Ազգիս, և 'ի փառս սուրբ Եկեղեցւոյ մերոյ։

Ն. Տ. ԵՐԵՄԻԱ ՉԱՀԱՆԱՑ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԽԱՍԳԻՒՂԻ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԱԿԱՆ

ԳՐԻՊԱԿԱՆ

1. Տոմարական ուսմունքը կարևոր գիտութիւն մի է, որ արեգական և լուսնի ընթացքներուն ստուգաբաշխական հաշիւներովը կբաժանէ զժամանակն ի տարի, յամիս, ի շաբաթ, յօր, ի ժամ, և ի բոպէ. և դարձեալ մի և նոյն բոպէն կբաժանէ ի 60, մանրերկրորդս, և ի մանրերրորդս։

Այս մանրամասն բաժանմունքներովը կիմացուին իւրաքանչիւր տարուան ժամանակին միջոցին մէջ պատահած արեգակնային ամսամուտները, լուսնի ծննդեան և լման օրերը, և ատոնցմով ալ եկեղեցական երևելի և գլխաւոր տօներուն ժամանակը։

2. Յայտնի է, որ Օտակական հաշակաւոր տօնը՝ ի յիշատակ Յարութեան Տեառն մերոյ՝ բոլոր քրիստոնեայ ազգայ եկեղեցիները մեծահանդէս կկատարեն. որ կոչէ գլխաւոր տօներուն ժամանակը. ինչպէս՝ որ ի մեզ, Ս. Սարգսի բարեկենդանի օրէն սկսեալ՝ մինչև Վարդավառի երրորդ կիրակէն՝ այս ընդարձակ վեցամեայ ժամանակին մէջ հարկաւ տօնելի տէրունի տօները, և սրբոց

օրերը՝ Ս. Յատկի տօնէն կախում ունի։ Ուստի թէ որ Ս. Յատկի տօնը ըստ սուրբ գրոց իր ճիշդ օրին չտօնուի, և ուղիղ կէտէն խոտորի, ըսել է որ, այն տարուան այս վերջամտեայ ժամանակին միջոցը տօնելի տօնները սխալ օրերու մէջ տօնած եմք։

3. Եւ Ս. Յատկի տօնն հարկաւ զատկական լուսնի ծնունդէն կախում ունի. որ ըստ Աստուածաշունչ սուրբ գրոց առաջին ամիս կանուանի։ (Ելից, Գլ. ԺԲ. 2։ Երկրորդ օրի. ԺԶ. 1։)

4. Յատկական լուսնի ծնունդն՝ այն ամսուն ծնունդն է, որոյ լրումն անմիջապէս գարնանային հասարակածէն զկնի, կամ՝ ի նոյն օր կպատահի, և այն լրմանը կըսուի՝ Լաւագ լրումն լուսնի։ (Ղևտ. Գլ. ԻԳ. 5։ Թուոց. Թ, 3. 5։)

5. Եւ այս աւագ լրման օրէն զկնի անմիջապէս պատահեալ առաջին կիւրակէն ըստ սուրբ գրոց՝ Յատիկ Տեառն է։

6. Եւ գարնանային հասարակաց կըսուի այն օրը, երբ արեգակը մարտ ամսոյ մէջ խայ կենդանակերպին առաջին աստիճանը կմտանէ, ախրը և գիշերը կհաւասարէ, որ ըստ աստե-

ղաբաշխից արեգական բնական տարեայն ըս-
կիզբն և առաջին օրն է. որուն գարնանա-
մուտ ալ կըսուի, և օտար լեզուաւ՝ Նէվ-
րուզ, այսինքն՝ նոր օր, կամ առաջին օր
բնական տարեայն։ Ահա այս է գարնանային
հասարակածը, որ ներկայ դարուս մարտ ամ-
սոյ 9դ օրը կպատահի. ինչպէս իւրաքանչիւր
տարեոյ օրացոյցք ժամաւ և բոպէիւ կիմա-
ցուցնեն։

7. Հայոց 1500 տարիի չափ յառաջ՝ այս
գարնանային հասարակածին ճիշդ օրը մարտ
ամսոյ 21դ օրն էր. վասն զի այն ատենը նոյն
21դ օրը արեգակը խոյ կենդանակերպին ա-
ռաջին աստիճանը կմտանէր։

8. Իւր այն ժամանակին տոմարագէտնե-
րը և աստղաբաշխները արեգական բնական
տարեայն տեւողութիւնը 365 օր, և ամբողջ
վեց ժամ հաշուելով, և այս հաշիւն ալ ան-
սխալ ճանաչելով, մարտի 21դ օրը յաւի-
տեան մինչև ի վախճան աշխարհի անփոփոխ
և անշարժ գարնանային հասարակածի օր ս-
րոշեր են. և տոմարական կանոնները և կար-
գադրութիւնները այս հիման վերայ հաստա-
տեր են։

9. Իւր յիրաւի, թէ որ արեգական տա-

բեկան ընթացքին տեւողութիւնը 365 օր, և ամբողջ վեց ժամ ըլլար, արդարև գարնանային հասարակածը ըստ գրութեան նախնի աստեղաբաշխից՝ մարտ ամսոյ 21դ օրէն բնաւ պիտի չշարժուէր, և նոյն մարտի 21դ օրը՝ գարնանային հասարակածի օր պիտի ըլլար մինչև ի վախճան աշխարհի։

10. Այլ շատ դարեր անցնելէն եռքը՝ մանաւանդ վերջասանեորդ դարուն այս գրութեան սխալ ըլլալը յայտնի եղաւ, և աւելի հմտագոյն իմաստնոց և աստեղաբաշխից նուրբ գնութեամբը յիշեալ վեց ժամէն մէկ քանի րոպէ պակաս ըլլալը ստուգեցաւ. և այս մէկ քանի րոպէները հետզհետէ դարէ ի դար շատնալով, հասարակածը մարտի 21դ օրէն սկսաւ կանխել դէպ ի սկիզբն մարտ ամսոյ, և հետևաբար մեր ազգային տոմարը իր հաշիւներուն նախնի ուղղութիւնը կորսուցուց։ Ա՛հա այս է առաջին վնասակը, և առաջին աղբիւրը տոմարական սխալանաց, և ուշադրութեան արժանաւոր կէտ, որ լաւ և յայտնապէս հասկնալու համար պարզ կերպով բացատրել արժան կը համարիմ յետագայ յօդուածներով։

ՑՕԴՈՒԱԾ, Ա.

11. Տոմարական կարգադրութիւնը քրիստոնէութեան շրջանում դարուն մէջ կարգի դրուեցաւ, և բոլոր քրիստոնէից ազգ միաբան հաճութեամբ ընդունելով սկսան գործածել. և իր սկզբնաւորութեան ժամանակը մէկ քանի դար բաւական անսխալ կցուցանէր, թէ արեգական ամսամուտները, թէ լուսնի ծնունդեան օրերը, թէ զատկական լուսնի կէսը, թէ աւագ լուսնը, և թէ եկեղեցական տօներուն ճիշդ օրերը. բայց շատ դարեր անցնելէն զկնի, ինչպէս ըսինք վերը, արեգական և լուսնի ընթացքներուն մէջը եղած մէկ քանի բոպէներուն տարբերութեանը պատճառաւ՝ կրցան իր ուղղութիւնը, և վրիպակները յայտնի եղաւ։ Իւ այս մէկ քանի բոպէներուն տարբերութիւնը այն ժամանակին ատողաբաշխները՝ գուցէ կամ չճանաչեցին, և կամ հաշուելու անիսպիտ եղան շատ սակաւաթիւ ըլլալուն համար։

12. Բայց այս սակաւաթիւ բոպէներուն տարբերութիւնը հետզհետէ աճելով աւելի շատցան, մինչև մեր տոմարին մէջ նշանակեալ Ս. Յատկի տօնն՝ հանգերձ զուգընթ-

թաց տերունի տօներովը՝ բուն իսկ Ս. գրոց յայտնած որոշեալ օրէն շատ հեռացան։

13. Վասն զի նախ՝ Ս. Զատկի տօնին Ս. գրոց նշանակած բուն աւագ լուսովը, որ գարնանային հասարակածէն զկնի անմիջապէս պատահեալ լուսին է, շատ անգամ անպիտան համարելով, 'ի բաց կձգուիկոր, և տոմարին սխալ հաշիւներուն հետևելով, գարնանային հասարակածէն զկնի երկրորդ լման կսպասեմք. և նոյն երկրորդ լուսովը՝ Աւագ լուսին համարելով, Ս. Զատկի տօնն իր որոշեալ օրէն հինգ շաբաթ դէպ 'ի ամառն կհեռացուցնեմք. և Ս. Զատկի տօնին ճիշդ օրը անառակ որդւոյն յիշատակութիւնը կկատարեմք։ 4։

14. Եւ երկրորդ՝ Ս. Զատկի տօնը, որ ըստ Ս. գրոց գարնանային աւագ լուսէն զկնի անմիջապէս պատահեալ առաջին կիւրակէն պարտ է օրէն էր կատարել, հիմա շատ անգամ աւագ լման առաջին կիւրակէն անցնելով, հետևեալ յետ վերջին քառորդին պատահեալ երկրորդ կիւրակէն կկատարեմք։ 5։

15. Ահա այս երկու տեսակ վրիպակները

վերոգրեալ մէկ քանի բոպէներուն տարբերութիւնէն յառաջ գալը, առաջին վերպակը 'ի կողմանէ արեգական, երկրորդը 'ի կողմանի լուսնի, քաջ տեղեկանալու համար, ապացուցանել հարկ կհամարիմ ծանուցեալ փաստերով։

ՅՕԴՈՒԱԾ, Բ.

ՎԻՊԱԿ ԱՌԱՋԻՆ Ի ՀԱՏԻՒ ԸՆԹԱՑԻՑ ԱՐԵԳԱԿԱՆ

16. Առաջին տոմարագէտք և աստեղաբաշխք, որոց կարդադրեալ տոմարը մինչև ցայսօր կգործածէ մեր ազգը, Արեգական տարեկան ընթացքին տևողութիւնը 365 օր, և ամբողջ վեց ժամ հաշուած են, ըսինք վերը։ 8։

17. Լու այս վեց ժամը չորս տարուան միջոցը, 24 ժամ, այսինքն մէկ օր չորրորդ տարուոյն փետրուար ամսոյն տալով, նոյն տարոյն փետրուար ամիսը 29 օր ունենալ որոշեր են, և նոյն տարուոյն նահանջ տարի ըսեր են, որ ուրիշ բան ըսել չէ, այլ նոյն տարուոյն փետրուար ամիսը 29 օր ունի, և կամ նոյն

տարին 366 օր ունի ըսել է։ Առաջին, երկրորդ և երրորդ տարւոյն փետրուար ամիսը 28 օր ունենալուն համար, հասարակ տարի ըսեր են. և չորրորդ տարւոյն փետրուար ամիսը 29 օրով բաղկացեալ ըլլալուն համար, նահանջ տարի։

18. Իւ այս դրութեամբ չորրորդ դարուն Նիկիոյ Ս. ժողովոյն ժամանակը՝ նախնի աստեղաբաշխք Արեգական տարեկան ընթացքին տևողութիւնը 365 օր, և ամբողջ վեց ժամ ճանաչելով, մարտ ամսոյ 21դ օրը միշտ անշարժ գարնանային հասարակածի օր ըլլալ հաստատեր են։ 8։

19. Իւ յիրաւի նոյն չորրորդ դարուն ատենը՝ մարտ ամսոյ 21դ օրը՝ գարնանային հասարակած ըլլալը ճշմարիտ էր, վասն զի նոյն օրը արեգակը իսոյ կենդանակերպին առաջին աստիճանը կմտանէր, բայց նոյն օրը անշարժ գարնանային հասարակածի օր որոշելին՝ ճշմարիտ չելաւ, վեց ժամը ամբողջ հաշուելնուն համար։

20. Վասն զի վերջին դարերու մէջ երեւելի և քաջահմուտ աստեղաբաշխներուն նուրբ դիտողութիւններով շատ յայտնի է.

զաւ և ստուգեցաւ, որ արեգական տարեկան ընթացքին տևողութիւնն է, 365 օր, 5 ժամ, 48 նախնական բոպէ, և 45 երկրորդական բոպէ. ըսել է որ, վեց ժամէն, 11 նախնական բոպէ, և 15 երկրորդական բոպէ պակաս է նախնի աստեղաբաշխից դրութենէն։

21. Յաւ այս 11 նախնական, և 15 երկրորդական բոպէները հետզհետէ աճելով, 130 տարուան միջոցը ամբողջ մէկ օր գարնանային հասարածը կյառաջանայր դէպ 'ի սկիզբը մարտ ամսոյն. և այսպէս դարէ 'ի դար յառաջանալով, 'ի միջոցի, 1500 ամաց, 12 օր բաղկանալով, գարնանային ճիշդ հասարակածը, մարտ ամսոյ 21ի օրէն ինչաւ հիմա մարտի 9ի օրը։

22. Յաւ որովհետև որ օր արեգակը առաջին աստիճան խոյին մտանէ, նոյն օրը գարնանային հասարակած է։ 6։

Յաւ հետևաբար հարկ է ըստ հրամանի II. գրոց, և ըստ կանոնի սրբազան հայրապետաց՝ գարնանային հասարակածէն, այսինքն մարտ ամսոյ 9 բդ օրէն զկնի անմիջապէս պատահեալ լուսնի լրումն Յաւգ լրումն ճանաչել։ 4։ (Կան. ԻԳ. 5։)

Յաւ զկնի այնր լրման անմիջապէս պատահ-

եւ կիւրակէ օրն ոչն զատկի հուչակել. որ է անժխտելի ճշմարտութիւն։ 5։

23. Բայց մեր տոմարը մարտի 21 ըդ օրը անշարժ գարնանային հասարակած ճանաչելով, այս ճշմարիտ հասարակածէն, այսինքն մարտ ամսոյ 9 ըդ օրէն, մինչև 'ի կեղծ հասարակած մարտի 21 ին, 12 աւուր միջոցը պատահեալ լուսնի լրումը՝ Ա՛ռաջ լրումն չըճանաչէր, որ իրօք և ճշմարտապէս Ա՛ստուածաշունչ Ս. գրոց յայտնած ճիշդ զատկական լուսնի Ա՛ռաջ լրումն է։ 4։ (Թուոց. Թ. 3. 5։)

Ա՛ն փոխանակ Ա՛ռաջ լրումն ըսելոյ, յետին լրումն կճանաչէ. և իբր անպիտան 'ի բաց ձգելով, գարնանային հասարակածէն զկնի՝ լուսնի երկրորդ լրմանը կսպասէ՝ զատիկ տօնելու. և այսպէս Ս. Զատկի մեծահանդէս տօնը շատ անգամ Ս. գրոց յայտնած իր իսկական օրէն հինգ շաբաթ ետքը կձգէ հանդերձ զուգընթաց տէրունական տօներով։

Ա՛հա այս է առաջին վրիպակը տոմարին մերոյ, որ մարտ ամսոյ 21 ըդ օրը անշարժ գարնանային հասարակած ճանաչելէն յառաջ կուգայ։

Ա՛ն այս ըսածներուս ճշմարտութիւնը ներկայ տարւոյն Ս. Զատկի աւուր օրինակաւը բացայայտ կերևի։

24. Ի 1864, ներկայ տարեւոյս օրացոյցը, և գտիր մարտ ամսոյ 8 րդ կիրակի օրը, ուր կկարդաս, արեգակը 'ի խոյն մտանէ, ժամ. 6։ ր.ո։ 41։

Որոյ հետեւեալ մարտի 9 րդ երկուշաբթի օրը՝ է ստոյգ գարնանային հասարակած։

Հիմա կպատուիրեմ մեզ Ս. գիրքը, թէ այս երկուշաբթի օրէն զկնի՝ մարտի 11 րդ՝ չորեքշաբթի օրը պատահեալ լուսնի լուսը՝ պատկական լուսնի Աւագ լուսն է։ 4։

Եւ զկնի այնր լման՝ մարտ 15, անմիջապէս պատահեալ առաջին կիւրակէն Ս. Զատկի տօն կատարել պէտք է։ 5։

Բայց տես սիրելի ընթերցող, որ մարտ 11, չորեքշաբթի օրը՝ փոխանակ Աւագ լուսն գրելոյ, յետին լուսն գրուած է, որ է սխալ։

Եւ այս սխալը կպարտաւորէ զմեզ յաջորդ լման սպասել, և զայն լուսը՝ Աւագ լուսն ճանաչել. ինչպէս նոյն օրացոյցին մէջ՝ ապրիլ 10, ուրբաթ օրը. կկարդաս՝ Աւագ լուսն լուսնի. որ է սխալ։

Վասն զի ըստ Ս. գրոց և ըստ կանոնի Նիկիոյ սուրբ ժողովոյ սրբազան հայրապետաց՝ ստոյգ Աւագ լուսը, մարտ ամսոյ՝ 11 րդ չորեքշաբթի աւուր լուսն էր։ Եւ նոյն աւուր գրուած յետին լուսն ալ՝ փոխարուար

ամսոյ 11 րդ երեքշաբթի օրը պէտք էր գրել։ 4։

Եւ այսպէս յետ ստոյգ Աւագ լսման, մարտ 15, առաջին կիւրակէն՝ փոխանակ ճիշտ մարտապէս զատիկ գրելոյ, անառակի կիւրակէ գրուած է, որ է սխալ։ 5։

Եւ Ս. Զատկի ասնն՝ մարտ 15, իր ճիշտ սեպհական օրէն հանելով, և հինգ շաբաթ դէպ ի ամառն հեռացուցանելով, ապրիլ ամսոյ 19 րդ կիրակի օրը գրուեր է. այս ալ սխալ։ (Երկրորդ օրինաց. ԺԶ. 1։)

Եւ այս բոլոր սխալներուն իսկական պատճառներն ասոնք են։

Նախ՝ մարտ ամսոյ 9 րդ օրը գարնանային հասարակած չճանաչելնիս. որ ստոյգ նոյն օրը գարնանային հասարակած լլլալը՝ ամենայն ազգ ընդ մեզ կվկայեն։

Երկրորդ՝ մարտ ամսոյ 21 րդ օրը՝ գարնանային հասարակած ճանաչելնիս. որ նոյն օրը գարնանային հասարակած չլլալը՝ գարձեալ ամենայն ազգ ընդ մեզ կվկայեն։

Եւ երրորդ՝ որ ապրիլն է առաջին վրիպակին, մարտ ամսոյ 9 րդ ճիշտ հասարակաձի օրէն, մինչև մարտ 21 րդ օրը, 12 աւուր մէջ պատահեալ լուսնի լրումը՝ Աւագ լրումն ալլալը՝ չճանաչելնիս. որ իրօք և ճշմարտապէս դատիսական լուսնի Աւագ լրումն է. զսոր ալ Ս. գիրք և սրբազան հայրապետք կվկայեն։

Այս է տոմարին մերոյ առաջին վերջ-
պակը, որ յաւաղ եկաւ նախնի աստեղա-
բաշխութեան։ Արեգական տարեկան ընթաց-
քին տևողութեան յիշեալ վեց ժամէն՝ 11,
նախնական բոլոր, և 15, երկրորդական բո-
լոր պակաս ըլլալը ճանաչելու անկարող՝ կամ
անփոյթ ըլլալէն. և յիշեալ վեց ժամը ամ-
բողջ հաշուելով, մարտի 21 րդ օրը յաւիտ-
եան գարնանային հաւասարած ճանաչելէն։ 8.

Ի բառնիլ պատճառին, բառնի և գործն։ 4.

Դամբ հետևաբար և երկրորդ վերջակին
վրայօք խօսիլ համառօտաբար, որ լաւ ու-
շադրութեամբ հարկ է ընթեռնուլ։

ԳՕԴՈՒԱԾ Գ.

ՎԵՐՋԱԿ ԵՐԿՐՈՐԴ Ի ՀԱՐԻՒ ԼՈՒՍՆԻ

23. Լուսնի պատեղաբաշխք և տոմարա-
գէտք քրիստոնէութեան առաջին դարերուն
ժամանակը շատ աշխատուցան երկու լուսա-
ւորաց՝ այսինքն արեգական և լուսնի մէկ շար-
ժանը գտնալ, կամ յօրինել, որ դիւրին կեր-
պով կարգի դնեն լուսնի տարիները, ամիս-
ները և օրերը, արեգական տարիներուն՝ ա-
միսներուն, և օրերուն համեմատութեամբը։

որպէս զի այն շրջանին լրացած ժամանակը՝ վերատին սկսեն շրջանը նոյն հաստատեալ կարգաւը։

26. Եւ մեծ աշխատութեամբ զանազան շրջաններու ձեռք զարնելէն զկնի, վերջապէս ընդունեցին հռչակաւոր աստեղաբաշխ Ղեթենացի Անթոնին գտած համառօտ և պիտանի իննեւտասան ամաց շրջանը. որ կ՚ըսուի շրջան լուսնի, կամ ոսկեդիր, և կամ իննեւտասներեակ. որն որ մինչև ցայսօր արևելեան եկեղեցիք կգործածեն զատկական լուսնի ծննդեան, և անոր Աւագ լման օրերը գտնելու համար։

27. Այս հռչակաւոր աստեղաբաշխին գտած իննեւտասներեակի շրջանին իմաստը այս է. որպէս թէ լուսինը 19 տարիէն զկնի, դարձեալ կուգայ արեգական հետ 'ի միասին այն կէտը, ուր որ էր 19 տարի յառաջ. ոչ թէ միայն նոյն օրը, այլ և նոյն ժամուն, և նոյն վայրկենին. ամենևին յետնութեան կամ յառաջնութեան փոփոխութիւն ինչ չունենալով, մինչև անգամ միով րոպէիս։

Օրինակի համար ենթադրեմք, թէ այսօր ապրիլի 12, օրը կիւրակէ, ծնանի լուսինը, ժամ 14, րոպէ 18. ասոր նմանը՝ այսինքն

ապրիլ 12, օրը կիրակէ, ժամ 14, բոպէ 18, դարձեալ պիտի ծնանի լուսինն 19 արեգակնային տարիէն զկնի, այսինքն հետևեալ շրջանին։ Այս դրութիւնը քաջ տեղեկանալու համար յայտնի օրինակաւ բացատրեմք։

28. Առ 1864 ներկայ տարւոյս օրացոյցը. դտիր հոն մարտ ամսոյ 25՝ չորեքշաբթի օրը. ուր կկարդաս ծնունդ զատկական լուսնի, ժամ 21. բոպէ 2։

Այսոր նմանը՝ այսինքն մարտ 25, չորեքշաբթի օր, ժամ 21. բոպէ 2. դարձեալ պիտի ծնանի զատկական լուսինը՝ 19 արեգակնային տարիէն զկնի։ Ահա այս է ինն ևտասներեակի շրջանին իմաստը։

29. Այս ինն ևտասներեակի շրջանին ճշդութեանը համոզուելով նախնի տոմարագէտք, և սոյն սկզբան վրայ կարգադրելով տոմարական հաշիւներուն կանոնները, հաստատեցին ինն ևտասներեակի շրջանը. զոր կը գործածեմք մինչև յարդ, և օրացոյցին սկիզբը իւրաքանչիւր տարւոյ ինն ևտասներեակը կդնեմք հանդերձ այլովքն, զատկական լուսնի ծննդեան և Աւագ լման օրերը գտանելու համար։

30. Եւ Յիրաւի այս ինն և տասնեւրեակի շրջանը իր սկզբնաւորութեան ժամանակը՝ մարտ 21 ին գարնանային հաւասարաժամին նը-ման, լոսն բաւականին անախալ կիմացուներ զատկական լուսնի ծնունդը և աւագ լուսնը. բայց շատ դարեր անցնելէն զկնի, ասոր ալ վերպակը յայտնի եղաւ, երկու լուսաւորաց ընթացքներուն տարբերութեանը պատճառաւ։

31. Կատն զի վերջին դարերուս քաղաքացիաց տասներորդաշխներուն մանրամասն ճիշդ հաշիւներովը իմացուեցաւ, որ այս ինն և տասնեւրեակին մէկ շրջանին լրացած ժամանակը, լուսնի ծնունդը դարձեալ նոյն կէտին՝ այսինքն նոյն ժամուն և նոյն րոպէին չպատահիրկոր, այլ յետադարձ շարժմամբ առաջին շրջանին կէտէն, 1 ժամ, 27 նախնական րոպէ, և 32 երկրորդական րոպէ կկանխէ կոր. ըսել է որ, ինն և տասնեւրեակի մէկ շրջանը լրացած առնելը, և միւս յաջորդ շրջանին սկսած ժամանակը, արեգակը և լուսինը անվրէպ և անխոտոր՝ այն կէտին մէջ չեն պատահիրկոր, ուր պատահեցան 19 տարի յառաջ նախընթաց շրջանին սկզբնաւորութեան ժամանակը, այլ իրը մէկ ու կէս ժամ կկանխեն։

32. Տես ներկայ տարւոյս զատկական լուսնի ծնունդեան կէտը, մարտ 25, չորեքշաբթի օր, ժամ 21, րոպէ 2։

Այս շրջանը լրանալէն ետքը, այսինքն 19 ապրիլէն սկսեալ, դարձեալ մարտ 25, չորեքշաբթի օր զատկական լուսնի ծնունդ պատահի պիտի, թէպէտ ի նոյն օր, բայց ոչ եթէ ի ժամ 21, որ 2, լաւ գրութեան Մեթոնի և նախնի աստեղաբաշխաց, այլ ի ժամ 19, և ի րոպէ 34։ Մէկ ժամ, 27 նախնական րոպէ, և 32 երկրորդական րոպէ կանխելուն համար։

33. Որ ահա այսպէս կանխելով, արեգական ընթացքը սակաւ սակաւ շատնալով, և լուսնի ընթացքը շրջանէ ի շրջան պակսելով, մեր տումարական հաշիւները դարձեալ նախնի ուղիղ դրութիւններէն շատ խոտորիցան, և զատկական լուսնի ճշմարիտ կէտը, և աւագ լման ստոյգ օրը՝ ուղղապէս մեղմ ցուցանել անբաւական եղան։ Վասն զի 312 ու կէս տարուան միջոցը՝ լուսնի ծնունդը՝ իւրաքանչիւր տարեկան շրջանին ցուցուցած օրէն մէկ օր դէպ ի սկիզբն մարտ ամսոյն յետադարձ շարժմամբ յառաջել սկսաւ։

34. Որ ինչպէս իւրաքանչիւր տարւոյ մարտ ամսոյ 21 րդ օրը՝ անեղանտ և անշարժ

դարձանային հասարակած ճանաչելը չորրորդ դարուն որոշեցաւ, ուրկից յառաջ եկաւ մեր տոմարին առաջին վերսկակը, այսպէս ալ այս ինենեւտանեբեակի շրջանը՝ իբր ուղիղ դրութիւն և անսխալ կանոն, նոյն դարուն մէջ հաստատեցաւ. որ մեծ յարգ և համբուրմ ունէր իւրաքանչիւր ազգաց մէջ, մինչև Ա. Թեոնացիք տարբոյն ինենեւտանեբեակի թուանշանը հրապարակի մէջ 'ի տես ամենեցուն ոսկեգիր գլխագրով կնշանակէին. ուստի ոսկեգիր, կամ ոսկեթիւ ալ ըսուեցաւ։

35. Ի՛նչ նոյն չորրորդ դարէն մինչև ցայսօր, 1500 տարուան միջոցին մէջ լուսնի իւրաքանչիւր շրջանին, 1 ժամ, 27 նախնական բոպէ, և 32 երկրորդական բոպէ յառաջնութիւնը հետզհետէ աճելով, և իրարու վրայ բարդուելով, զատկական լուսնի ճիշտ ծնունդեան օրը սկսաւ կանխել հինգ օր յառաջ, ինենեւտանեբեակի ցուցուցած օրէն դէպ 'ի սկիզբն արեգակնային ամսոյն, և մեր տոմարին ցուցուցած լուսնի ծննդեան օրը, լուսնի ճիշտ ծննդեան օրէն հինգ օր ետքը մնաց։

36. Դ. ամբ հիմա Ս. գրոց հրամանին, և մեր տոմարին խրատներուն տարբերութիւնը ուշի ուշով նկատել։

Ս. Դիւքը կհրամայէ, թէ որ ամսոյն լրու-

մը անմիջապէս կարատահի գարնանային հաստատակածէն զկնի, նոյն ամիսը զատիկան լուսնի ամիս է. և նոյն ամսոյն չորեքտասանեերորդ օրը, զատիկան լուսնի Աւագ լուսն է.

Եւ Նիկիոյ Ս. ժողովոյ սրբազան հայրապետք կանոն հաստատեցին, թէ նոյն ամսոյ չորեքտասանեերորդ օրէն զկնի անմիջապէս պատահեալ կիւրակէ օրն պարտ է Ս. Յարուկի տօն կատարել։

Տես և մեր տոմարին խրատն ալ. զատիկան լուսնի հետևեալ օրը՝ ամսոյն առաջին օրը չճանաչէր. հինգ օր բացառութիւն կընէ. վեցերորդ օրը լուսնի առաջին օր կհամարէ, և նոյն վեցերորդ օրէն թուելով, 19 րդ օրը՝ լուսնի չորեքտասանեերորդ օրը, այսինքն աւագ լուսն ըլլալ կիմացուցնէ, և այս 19 րդ օրէն զկնի պատահեալ կիւրակէ օրն՝ զատիկ տօնել կիսրատէ։ Ահա այս ալ ուշադրութեան արժանաւոր կէտ մի է, և շատ յայտնի բան է այս երկու տեսակ խրատներուն՝ որուն հարկ է անսալը։

37. Այց մեք դժբաղդաբար զատիկան լուսնի ծնունդը, և նորին Աւագ լուսնը, զորս աչօք ակներև կտեսանեմք, ակամայ 'ի բաց կմերժեմք, և մեր տոմարին նշանակած իններևտասներեակին սխալ հաշիւներուն հե-

տեսելով, կը սրատեսութիւնը լուսնի 6 րդ օրը՝ առաջին օր ճանաչել, և նոյն 6 րդ օրէն թուելով 19 րդ օրը՝ շաբաթաստանեաց օր, այսինքն Աստուած լուսին համարել, և նորին հետևեալ կիրակի օրն զատիկ տօնել։

38. Բայց քանի որ այս թիւնեւ տասնեակի սխալ հաշուեցողութիւնը շաբաթաստանեաց օր լուսածնեան՝ լուսնի ճիշդ 19 րդ օրն է, հարկաւ Ս. Զատկի օրը իր ուղիղ կէտէն մէկ շաբաթ ետքը կմնայ դիմի վերջին քառորդին, և Ս. Զատկի որոշեալ աւուր սահմանէն կանցնի. որ ըստ անվրէպ կանոնի Նիկիոյ Ս. ժողովոյ, և սրբազան հայրապետաց մերոց, լուսնի 15 րդ օրէն բաղադրութեամբ սկսեալ մինչև 21 րդ օրն է զատիկական աւուր սահմանը։

Ահա այս է երկրորդ վրիպակը մեր տոմարին, որ յառաջ եկաւ թիւնեւ տասնեակի շրջանին մէկ ժամ, 27 նախնական, և 32 երկրորդական բոլոր կանխելէն, և դէպի սկիզբն արեգակնային ամսոյն յառաջանալէն, որոյ շարժմամբ դարուն տասնզաբաշխք կերեւի թէ անծանօթ և անտեղեակ էին։

Իւ այս լուսածնեաց ներկայ տարւոյս Ս. Զատկի օրինակաւ հաստատեմք։

39. Ի դարձեալ 1864 ներկայ տարւոյս օրացոյցը, տես անոր սկիզբը սոյն տարւոյս

ինենեւտասներեակը, որ է, 1։ Լոյս վերադիրը, որ է, Բ։

Այլ տոմարը մեզի կիմացուցանէ, թէ որ տարբերն ինենեւտասներեակը՝ 1։ Լոյս վերադիրը՝ Բ, ըլլայ, նոյն տարբերն զատկական լուսնի ծնունդն մարտի 29 կիրակի օր կպատահի, եւ աւագ լուսնն ապրիլ 13։ երկուշաբթի օր։

Իսկ կանոնաց օրացոյցին մէջ զատկական լուսնի ծնունդը բաղադրութեամբ հինգ օր յառաջ մարտ 25, չորեքշաբթի օր, եւ նորին աւագ լուսնն ալ ապրիլ 10, ուրբաթ օր, որոյ հետեւեալ կիւրակէ օրն՝ ապրիլ 12, լսոտ ուղիղ կանոնի սրբոյ եկեղեցւոյ մերոյ օրէն էր ասն զատկի կատարել. բայց լսոտ սխալ խրատու տոմարին մերոյ ասն ծաղկազարդի կատարեցինք։ ինչու որ զատկական լուսնի ծնունդեան տարբերն, ինչպէս կանոնաց հան, մարտ 25, չորեքշաբթի օր, տոմարը կցուցանէ մարտ 29, կիրակի օր, բաղադրութեամբ հինգ օր եւաքը։

Լոյս նորին տարբերն Լուսադ լման օրը, որ ապրիլ 10, ուրբաթ օր կկարդաս հան, կտանի ապրիլ 13, երկուշաբթի օրը ըլլալ կցուցանէ. եւ զմեղ ակամայ կպարտաւորէ ապրիլ 19 ը օրը զատիկ տօնելու, եւ այս պատճառաւ Ս. Զատկի տօնն իր սեպհական օրէն մէկ շաբաթ ալ եւաքը կձգէ։

40. Եւ այս ալ գիտնալ պէտք է, որ այս երկու տեսակ վերիպակները երբեմն մէկանց կպատահին, առաջին վերիպակը, որ 'ի հաշիւ արեգական, չորս շաբաթ կհեռացընէ. և երկրորդ վերիպակը՝ 'ի հաշիւ լուսնի՝ մէկ շաբաթ. որով Ս. Յատկի տօնը՝ իր ճրշմարիտ օրէն հինգ շաբաթ ետքը կմնայ. ինչպէս ներկայ տարւոյս զատիկը, որոյ ճշմարիտ կէտը՝ մարտ ամսոյ 15 րդ օրն էր, բայց տոմարին երկատեսակ վերիպակները տարաւ հասոյց ապրիլ 19. որ պատիւ չբերեր մեր Աղգին։

Եւ երբեմն ալ միւնակ երկրորդ վերիպակը կպատահի, և այն տարին Ս. Յատկի տօնը մէկ շաբաթ ետքը կմնայ, փոխանակ զատիկ տօնելոյ ծաղկազարդ կտօնեմք։ Այս ալ անցեալ տարուան Ս. Յատկի օրինակաւը կհասատատի։

41. Դարձեր 1863 անցեալ տարւոյն օրացոյցը, տես անոր սկիզբը գրուած նոյն տարւոյն ինենեւտանեներեակը, որ է 19։ Եւ վերադիրը, որ է, ԻԱ։

Մեր տոմարը մեզի կիմացուցանէ, թէ որ տարւոյն ինենեւտանեներեակը, 19. և վերադիրն, ԻԱ, ըլլայ, նոյն տարւոյն զատիկան լուսնի ծնունդն կը պատահի մարտ 12. երեք-

շաբթի օր. և Լուսագ լուսին ալ կը պատահի, մարտ 25. երկուշաբթի օր. որոյ հետևեալ կիւրակէն մարտ 31 զատիկ տօնել կպատուիրէ. ինչու որ աւագ լուսնի երկուշաբթի օրը պատահեցաւ՝ կըսէ։ Մտոյգը կխօսիմ, որ այս ըսածները բոլորն ալ սխալ է, ինչպէս դուն ալ նոյն օրացոյցին մէջ կտեսնաս, որ զատիկան լուսնի ծնունդը, ոչ թէ տոմարին ըսածին պէս մարտ 12 ին, երեքշաբթի օր պատահեր է, այլ մարտի 7 ին հինգշաբթի օր։ Լուսագ լուսին ալ՝ ոչ եթէ մարտ 25, երկուշաբթի օր, այլ մարտ 23. շաբաթ օր. Ժամոցը և բոպէոցը գրուած, որոյ հետևեալ օրը մարտ 24, պարտ էր զատիկ տօնել, ըստ Մահմանադրութեան Նիկիոյ հոգեգուսրբ ժողովոյն, և ըստ կանոնի Նախնի Աստուածարեալ և առաքելաշնորհ սրբազան Հայրապետաց մերոց. բայց նոյն օրը սխալաբար ծաղկազարդ տօնեցինք, և սուրբ զատիկը մէկ շաբաթ ետքը՝ մարտի 31 ըդ օրը ձգեցինք։ Ինչու որ զատիկան լուսնի աւագ լուսնը, որ ինչպէս կը տեսնաս օրացոյցին մէջ մարտի 23 ըդ շաբաթ օրն էր, մեր տոմարը մարտի 25 ըդ երկուշաբթի օրն ըլլալ կիմացուներ մեզի, և կը պարտաւորէ մարտի 31 ըդ օրը զատիկ տօնել։

Լու ահա այս ըսածներս բոլորն ալ 1863 տարուոյն օրացոյցին մէջ բացայայտ կ'երևի։

ՎԵՐՋԱԲԱՆ

Եւ եթէ այս վերապակները ուղղելու ջանք չընայ, հարիւր օր ըստ օրէ գնալով պիտի աճին, մինչև քանի ինչ դարերէն զկնի, մեր տոմարին մէջ նշանակեալ զատկական լուսնի ծնունդը մարտի և ապրիլի գարնանային ամիսներէն հեռանալով, անցնի երթայ պիտի 'ի մայիս, 'ի յունիս, և անդր ևս։

Ուստի այս համառօտ ազդարարութիւնը ընելով կը յուսամ, որ Աղգիս յառաջադիմութեան և բարի համբաւոյն բաղձանք ունեցող ազգասէր անձինք կը յօժարին այս վերապակներուն ուղղութեանը յարմար միջոցը խորհելու. որով մեր սուրբ եկեղեցին թէ սուրբ զատկի մեծահանդէս տօնը, և թէ բոլոր զուգընթաց տէրունի տօնները նախնի սրբազան հայրապետաց կանոնացը համաձայն իրենց ճիշդ նշանակեալ օրերը կատնէ, և մեր ազգն ալ առաջի լուսաւորեալ ազգաց յառաջադիմութեան անուն, և աշխարհալուր բարի համբաւ կրստանայ։

Ի՛նչ այս եթէ Աղգիս լուութիւնը բարեհա-

ձի, նուաստութիւնս ալ, որ քան և հինգ տարիէ ի վեր ապրպային տարեկան օրացոյցին հեղինակութեանը կաշխատիմ, կիսոսանամ՝ շնորհիւն Աստուծոյ այս վիճակներուն ուղղութեանը անխոնջ աշխատիլ, բնաւ երբէք մէկ փոքր փոփոխութեան տեղի չտալով, թէ ի ծէսս և թէ յեկեղեցական արարողութիւնս. և տոմարական ճիշդ հաշիւները հարիւրաւոր դարեր անվրէպ մնալու կերպով՝ կանոնաւոր աղիւսակներով կարդի դնել, ի պարծանս սուրբ Եկեղեցւոյ մերոյ, և ի սէր սիրելի Ազգիս։

Ն. Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ
Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԽԱՅԻՒՂԻ

2858

2013

Գին 3 դրամ։